

Զ Ծ Ն Ե Զ Ծ Գ

ՏԱՂ ՄԵԾԻ ՆԵՐՍԻՍԻ

Վենեսիկի հրատարակութեան մեջ, № 463, կը գտնուի օտի մը «Ներսիսի Հայրապետի» վերնագրով եւ «Նոր եւ առաջին լոյս» սկզբնաւորութեամբ, որուն տպագրիչը գրեւոր կը կազմեն «Ներսեսի Նիսիսի» բառերը: Մեր Թ. 231 ձեռագիրը «Տաղ Մեծի Ներսիսի», ի Ներսեսի խորագրին օտի սոյն օտիին առաջին չորս օտիները միայն օտի վերջ, լուսանցի վրայ կը նշանակէ Թ եւ կ'աւելցնէ հետեւեալ հասցումը, որուն օտիան կիզբի գրեւոր կը կապեն, «Դովեոս Մեծին Հոմանկանն Նմին» բառերը:

Դովեմբ այսաւր զհայրն բարո,
 յիշատակաւ հաւրս մերո:
 Արգելի տուք փառս որդիք լուսո
 ի յանդրանկաց տաւնիս մերո:
 Վտակի բրդիմանն երգեմք երգ նոր,
 ընդ տաճարիս իւր հոգեւոր:
 Երանութեանց արժանաւոր,
 ի յարգանդէ ընտրեալ մարութ:
 Սուրբ եւ սիրող գոլ սրբութեան,
 ի հրեշտակաց յայտնեալ տեսեամք:
 Տան Աստուծոյ տնտես բարի,
 բանաւորաց հովիւ արի:
 Մեծին նման քաղցր եւ զրթած,
 զլուարթաւոր եւ ողորմած:
 Եւ ճգնութեան հարց վարուց սիրող,
 եւ զերգանց լուսոյն տեսող:
 Մագեալ զգործոց իւր լոյս յաշխարհ,
 որպէս ըզմրագ ի յաշտանակ:
 Ի փառս Հաւրն երկնաւորի,
 ըստ տէրունեանն հրամանի:
 Նաւարկելով անխռովական,
 ընդ ծով կենացս անհրկական:
 Հասնալ յանքոյթ նաւահանգիստ,
 ճրգնողական վարութ եւ խիստ:
 Որով հոգւոյն արժանացեալ,
 ալաւնակերպ տեսեամք յայտնեալ:
 Մեծաց հրաշից շնորհաց հասնալ,
 եւ նըշանաց գործաւդ եղեալ:
 Անհրկ զլզին ալբերացեալ,
 յորդ արտասուաւ սրբոյն բոլանալ:
 Նորին մաղթանք ուռկանք եղեալ,
 ի ջուրց խորոց ձրկունս հանեալ:
 Վանէր զերկրորդն այն Ամաղէկ,
 ըստ Մովսէսի գոլով հանգէտ:
 Անդ ի լերինն նըպատական,

մաքուր ձեռացըն տարածմամբ :

Նոյն ըզբաժակ մահու արքիալ ,

ի դաւողէն դաւաճանեալ :

Նըման լուսո փայլման սլացեալ ,

{ եւ իրկնայնոց համադգսեալ : }

Նա այժմ ընդ մեզ բարեխաւսէ ,

ըզթողութիւն մեղաց հայցէ :

Մըտեալ ներքո վարագուրին ,

յետ առաջնո ի յերկրորդին :

Ի սրբութիւն սրբոցն յառեալ ,

յորում Յիսուս յաջմէ բազմեալ :

Նըմին երգէ ընդ սրբէից ,

զերեքսրբանն յաւիտենից :



ՏԱՂ. ՍՈՒՐԲ. ԽԱԶԻ

Նոր դրախտին եկեղեցւո , ծառ կենաց տընկեալ ի մէջ ,
ոչ⁽¹⁾ քրովբէիք պահեալ , այլ գիւրահուպ ի մէնջ :

Երկակի ներհակաց տիպ , մահաբերին տընկոյ ձեւովդ ,

եւ կենարարաւն ի քեզ⁽²⁾ , ծառոյն կենաց նըման :

Բոպէից բանաւորաց , բանալի եղեր դրախտին մտից⁽³⁾ ,

վերըստին ի նոյն , անփոփոխելի կայիւք :

Սեռն անապակ սիրոյ էին , ծածկելոյն առ Հաւր յայտնիլ ,

զորդին խը տալ վասն իմ , ի մահ մարմնով ի քեզ :

Իմանայի տապան Նոյեան , զաւժանդակեալս ի քեզ պահեա ,

ի հեղձական⁽⁴⁾ մեղաց ծովէ , եւ ի հրեղէն գետոցն :

Սաքեկա ծառոյն նըման , ոչ խոյ չորջակէզ կախեալ ,

այլ գառն Աստուծոյ զննեալ , մեզ հաշտութեան նուէր :

Ի Գողգոթայ կանգնեալ սանուխք , տեսեալմր Յակովբա ցուցեալ ,

հրեշտակաց իջման յերկիր , եւ մարդկան ելից յերկինս⁽⁵⁾ :

Էրեւեալ մովսէսեան բցուպ , բզծով մեղաց հերձանելով ,

եւ իսրայելի նորո , առաջնորդես ի լոյս⁽⁶⁾ :

Հրաւ. Ն . Վ . ԽՈՎԱԿԱՆ

(1) Տպ. գոր ոչ : (2) Տպ. ի բէն պրքուղ կենաց մարդկան : (3) Տպ. մօից վերստին : (4) Տպ. ի հեղձ-
մանէ : (5) Տպագիրը կը վերջանայ հաս : (6) Չեւ . Խ . 231 :

